



Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 16

ՏԵՐԱԲԱԹ

16 ԱՊՐԻԼ 1905

Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ		ԳՕԻԱՌՈՑ ՀԱՄԱՐ		ԱՐՏԱՍՈՂՄԱՆԻ	
Տարեկան	50 Ղր.	Տարեկան	54 Ղր.	Տարեկան	12 Ֆր.
Վեցամսեայ	25 »	Վեցամսեայ	27 »	Վեցամսեայ	6 »

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍՕՅ ԵՒ ԸՆԿ

ՄԵԾ ՎԱԶԱՌԱՑՈՒՆ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՑՈՅՆԵՐՈՒ, ՇՂԹԱՅՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԻՆԱՑ

Կ. Պոլիս, Ճիշտ Պէյ խանին տակ, Թիւ 16

Մասնաւորապէս կը խնդրուի ուշադրութիւն ընել ՍԱՐԳԻՍՕՅ անունը կեղծող կարգ մը նորեղուկ ժամացոյցներուն որոնք հրապարակի վրայ կը երջին :

ՍԱՐԳԻՍՕՅ ժամացոյցները ջերմապէս կը յանձնարարուին ինչպէս նաեւ ԶԵՆԻԹԸ՝ քե՛ Կ. Պոլիս, եւ քե՛ Գաւառները, ուրիշ եղանակով յանձնարարութիւնք անմիջապէս կը կատարուին գոհացուցիչ պայմաններով :

Ծանօթ. — ԶԵՆԻԹ ժամացոյցները Բարիկի 1900 Արուեստահանդէսին մէջ ամենեւնի բարձր պարգեւին արժանացած են :


Հասց 40 փարս

ԱՐՏՈՆԱՏԷՐ — ԱՌՄԷՆ ԱՌԻՍԻՆԱՆ

(كتيخانه جهاز) مطبعه سی — باب عالی مجده سی ۳۸

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԺԻՂԱՆ ԳՐԱՏԱՆ

Կ. Պոլիս Պապր-Ալի հասցէի քիւ 38



Ձեռքի, ոտի ու ոտի եւ ձեռքի
միանգամայն անհրաժեշտ
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ,
բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ
մեքենայ մը անթիւ է անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
եւ տաղաւակի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ զիտէ թիւ

Ս Ի Ն Կ Է Ի

ՀԱՅՐԱՅՈՒՆ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. ոոյն մեքենան ամենէն կատարելագործուածը,
հաստատունը եւ զիրարգործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկէր Ընկերութեան վաճառատանց մէջ

ՇԱԲԱԹԱԿԱՆ
ՄԱՍՆԱՎԱՅՈՒՆՆԵՐ

- | | |
|--------|---|
| ԲԵՐՍ. | (1. Մեծ փողոց, Պոն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին. |
| | (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ. |
| ԿԱԼԱԹԱ | (1. Սինկէր խան, Թիւնկի ետեւը. |
| | (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | (1. Սուլթան համալ. |
| | (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13. |
| ՍԵԻՏՍՐ | (2 արշը Պոյու, թիւ 120. |

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնաձիղեր գաւառներու բոլոր ֆաղափներու մէջ:

Սինկէրի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 եւ 343 կրկին, Տիւզօղլուի տունը:

ՖԷՆԻՔՍ ՕԹԲԻՇԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆՈՒՄԻ 1860 ԻՆ ԻՎԻԷՆԱ

ԿԵՄԵՔԻ ՃԻԻՂ

Դրամագլուխ եւ Պահեստի գումար

31,008,000 Ճրանգ

ՀԲԳԵՀԻ ՃԻԻՂ

Դրամագլուխ եւ Պահեստի գումար

17,000,000 Ճրանգ

- ՖԷՆԻՔՍ** Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ ամէն տեսակ շէնք, ապրանք եւ կարասիք:
- ՆԻՔՍ** Լաւագոյն պայմաններով կը կնքէ ամէն տեսակ ապահովագրութիւնը մարդկային կանքի վրայ:
- ՆԻՔՍ** Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ, ամէն տեսակ ապրանք՝ չողհնաւի՝ եւ առաջատանաւի վրայ:

Ընկերութեան գրամատունն է ԲԲԵՏԻ ԼԻՕՆԷ, Ընդհանուր գործակալութեան գրասեն-
եակն է Պոլիս, Ալեանաք խան, թիւ 11—16:

Ընկերութիւնս կ'ընդունի ի գաւառս պատուաւոր ներկայացուցիչներ:

Լիւազօր ճերկայացուցիչ

Գ. ՖԷՐԱՏԵԱՆ



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ ՎԱՅԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ Թ/ս 16

ՇԱԲԱԹ

16 Ապրիլ 1905

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Անվերջ վիվուկ. (Խմբագրական). — ՎԱՀԱՆ ԹՕՇԻԿԵԱՆ : Սանկ Նանկ խօսիր. — ԹԷՈՒԻԿ : Ծաղիկի մը վերջին ժամերը . — ՀԱՅԱՆՈՅՇ ՄԱՌՔ : Ուղեք . — ՅԱԿՈԲ ՏԷՐ-ՅԱԿՈԲԵԱՆ : Խօսուքուք (Հայրական խրատներ) . — ԿԱՎՈՇ : Թուալիք , Վիգիբա եւ Հաւիք (Զատիկ . . . ձու յօդուած) . — ԼԻԼԱ : Ծովուն գիտերը (Ոսանաւոր) . ԱՆԴՐԱՆԻԿ ՆՍԱՅԵԱՆ : Լուսեռու բաժին : 100,00 Տարի Սառնակոյսի մը մէջ . (Հանրագիտակի քերթօն) LOUIS BOUSSENARD (Թարգմ.) Յ. ՏԷՐ-ՅԱԿՈԲԵԱՆ :

ԱՆՎԵՐՋ ՎԼՎԼՈՒԿ

Այլազան ու կնճռոտ հանգամանք մը առաւ վերջերս Իսկիւտարի Թաղերուն միացման խնդիրը , որ չեմ գիտեր քանի՜ տարիներէ ի վեր կը ծեծուի , առանց ու եւ արդիւնքի մը յանգելու : Թաղ . Խորհուրդներ , Հոգաբարձութիւններ նիստ նիստի վրայ կը գումարեն , կարծիքներ կը փոխանակեն , որոշումներ կ'արձանագրուին , Թաղեցիները օրուան խօսակցութեան նիւթ կընեն զայն , կրակոտ վիճաբանութիւններ տեղի կունենան , վարժարաններու տեսուչներն ու ուսուցիչները երկունքի ցաւեր կ'անցընեն , և սակայն խնդիրը կը մնայ նորէն հոն ուր որ էր արդէն , մի միայն սա արդիւնքը առաջ բերելով որ Պոլսահայ լրագրութիւնը յաճախ ստիպուած կ'ըլլայ արձագանքը ըլլալ բոլոր այս շարժումներուն , անվերջ վիվլուկներուն , և ընթերցողներուն գլուխը բաւականէն աւելի կ'արդուկուի բնականաբար :

Թէ ինչո՞ւ այսքան աննպաստ կը խօսինք Իսկիւտարի Թաղերուն այս միացման խնդրոյն , որուն համամիտ կը գտնուին շատեր , նոյն իսկ այդ մեծ արուարձանին բնակիչներուն մէկ մասը , պիտի պարզենք քանի մը տողերու մէջ , չը

ձանձրացնելու համար մեր ընթերցողները Ձատկի օրերուն կրթական խնդիր մը ուսումնասիրել տալով իրենց :

Նախ որ՝ Ս. Խաչի և Իճատիէի թաղերը իրենց ուրոյն թաղեցիները ունենալով չա՛տ լաւ կրնան պահել ուրոյն վարժարան մը և եկեղեցի մը , և այս՝ այնքան կանոնաւոր ու բարեկարգ վիճակի մէջ , որքան նիւթապէս ու բարոյապէս , ինչ որ արդէն իրականութիւն մըն է այսօր :

Միացումը օգտակար պիտի ըլլար այն ատեն երբ երկու թաղերէն մին կամ միւսը ի վիճակի չըլլար օրինաւոր դպրոց մը ունենալու , թաղին մանուկները կրթելու , և ստիպուած ըլլար հետեւաբար միացնել իր ուժերը միւսին , որպէսզի ամբողջութեամբ կարելի ըլլար գոնէ օգտակար արդիւնք մը առաջ բերել : Բարեբաղդաբար , այս կացութիւնը չէ որ գրգռու կուտայ միացման ստիպողականութեան , և նիւթական հարկը չէ՝ որ անհրաժեշտ կ'ընէ այդ միացումը պսակելու :

Իսկիւտարի մեր բարեկամները թաղերը միացնելու ելբր են անոր համար որ , Հայ վարժարանները իրենց մատակարարութիւնը իրարու խառնելով կարող ըլլան մրցումի ելնել այդ թաղին մէջ հաստատուած օտար վարժարաններու դէմ , որոնք , ինչպէս կը հաւաստեն մեզի , բաւական հոյ աշակերտներ որսացած են թաղէն :

Դժբաղդութիւնը հոն է որ սակայն այդ որսացումին պատճառը Ս. Խաչ և Իճատիէ անշատաբար իրենք իրենց մէջ չեն փնտռեր , և փոխանակ դիւցազնութիւնը ունենալու իրենք իրենց մաքաւելու այդ որսացումին դէմ , կ'ուզեն իրարու օժանդակութիւնը վայելել , կարծելով որ՝ միմիայն մէկ թաղի մատակարարութիւնը չը կրնալ բարւոքող մարմին մը՝ կարողութիւն կրնայ ունենալ ուրիշ թաղի մը մատակարարութիւնն ալ ստանձնելու , և այսպէսով մրցման ելնելու բազմապատիկ աւելի ուժերով զօրացած օտար կրթարաններու հետ :

Օտար կրթութեան հանդէպ՝ Իսկիւտարցիներուն ցոյց տուած այս նախանձախնդրութիւնը գովելի ըլլալով հանդերձ , չը վարանինք ըսելու որ ոնոնք շատ աւելի օգտակար գործ մը ըրած պիտի ըլլան , երբ մանաւանդ իրենք իրենց դէմ մրցումի ելնելու պատրաստութիւնն ու փափաքը ունենան , և այս սկզբունքին փարած , ջանան հետզհետէ աւելի բարւոքել իրենց վարժարանները , որոնք ինքնին իսկ բաւական կրնան ըլլալ , — եթէ քիչ մը կամք և գործին գիտակցութիւնը ունենան այդ դպրոցները մատակարարող մարդիկը — մրցումի ելնելու այդ օտար հաստատութեանց հետ :

Թո՛ղ որ ազգային նախակրթարանէ մը՝ — ըլլայ այն՝ տարրական կամ բարձրագոյն — չսպասուիր այն դաստիարակութիւնը զոր կուտան այդ օտար կրթարանները , մայրաքաղաքիս ո՛ր թաղերուն մէջ ալ հաստատուած ըլլան , որովհետեւ նախ որ նիւթական այնքան զոհողութիւն չենք կրնար ընել մենք մեր թաղային դպրոցներուն համար , որքան կրնան ընել անոնք նիւթապէս՝ աւելի բարգաւաճ ըլլալով , և երկրորդ որ՝ մեր փնտռած դաստիարակութիւնը չէ որ յաճախ պիտի գտնենք այդ օտար կրթարաններուն մէջ :

Ս. Խաչի և Իճատիէի թաղերու վարժարանները , — թողունք եկեղեցական

միութիւնը — եթէ իրենց սկզբունք ընեն իրարու դէմ մրցելու ոգին, չա՛տ հաւանական է որ աւելի՛ յառաջդիմութիւն մը ունենան քան ինչ որ ունին հիւ-
մա։ Ուրիշ պարագայ մըն ալ կայ։ Թաղեցիական իրաւունքը պէտք չէ՛ բնաւ
կապտել, և ամէն թաղեցի պէտք է առաւելապէս փարի իր՝ քան դրացի թա-
ղին զարգացումին համար, հոգ չէ թէ ան դրացին ալ ի՛րը ըլլայ նորէն։

Եթէ երբեք օր մը այդ անտեղի միացումը իրականութիւն դառնէ, հա-
րիւրին հարիւր վստահ եմ որ ջանքերը, աշխատութիւնները, զոհողութիւնները
պիտի պակսին, մրցումի ոգին պիտի ջլատուի բոլորովին, և ինչ որ ամէնէն ա-
ւելի ցաւագինն է, այդ միացման զօրութենէն աւելի տկարութենէն պիտի
նպաստաւորուին այդ թաղին մէջ հաստատուած օտար կրթարանները, որոնք
պատրաստ՝ որս ուտելու կ'սպասեն արդէն։

ՎԱՀԱՆ ԹՕՇԻԿԵԱՆ

ԴԱՌՆԱՂԷՏ ՄԱՆ

Երկուշաբթի Սկիւտար Ս. Խաչ եկեղեցւոյն մէջ կատարուեցաւ յուզարկա-
ւորութեան տխուր արարողութիւնը՝

ԽԱՉԻԿ ԷՖ. ՊԱՍՄԱՋԵԱՆԻ

Ընդ նախագահութեամբ եկեղեցւոյն քարոզիչ Գեր. Տ. Մկրտիչ Եպիսկ. Վե-
հապետեանի որ իր շուրջը ունէր վարդապետներ և բողոքական քահանաներ։

Վաղամեռիկ երիտասարդին տխրասարսուռ դագաղը շրջանաւորած էին ի-
րեն համակիր ազգականները և բարեկամները։

Եկեղեցական արարողութենէն վերջ, Գեր. Տ. Ներսէս Վրդ. Դանիէլեան բեմ
ելլելով յուզիչ շեշտով մը խօսեցաւ տարաբաղդ երիտասարդին վրայ, և
թուեց անոր բարեմասնութիւններն ուսման և առեւտրական աշխարհին մէջ։
Հուսկ յետոյ թափօրը կազմուելով, դագաղը որուն ծոպերը և կերոնները բըռ-
նած էին հանգուցեայն վշտակիր բարեկամները, առաջնորդուեցաւ տեղւոյն
գերեզմանատունը ու մարմինը ամփոփուեցաւ յատուկ դամբանին մէջ։

Խմբագրութիւնն տպրիններէ ի վեր ծանօթ ըլլալով վաղամեռիկ երիտասար-
դին, կը փութայ իր խորին ցաւակցութիւնը յայտնել իր անմխիթար ծնողաց,
ինչպէս նաեւ պարագաներուն։

ՍԱՆԿ ՆԱՆԿ ԽՕՍՔԵՐ

Զատիկը պիտի գայ, Զատիկը կուգայ կոր,
Զատիկը եկաւ :

Այո՛, տղա, ողջ մնացողին ամէն բան
կուգայ. եւ մարդկային սիրտը այսպէս ա-
պառնիւնքներ կային, ներկայէն կասարեա-
լին համար միշտ պիտի տրուի :

Բայց բաղձացուած բանի մը ժամանումը
չես գիտեր ինչո՞ւ հիասթափում մը ունի իր
մէջ :

Կ'աշխատես ամբողջ շաբաթը, եւ չու-
աններով կը փաշտես հանգիստի օրը՝ կիրակին:
Եկա՛ւ, կը տեսնես, կը ձանձրանաս ու չես
ունենար զբօսանք մը՝ ուր յօանջումը իր
բաժինը չունենայ: Ինչո՞ւ :

Ինձի կուգայ որ այս « ինչուն » մեկնել
պարզ է: Վասն զի շաբաթուան վեց օրերը
չէի՛ր անցուցած այնպէս՝ որպէս պէ՛տք է:
Պարտականութիւններուդ մէջ՝ եթէ ոչ ամ-
բողջովին, զոնք մասամբ բերացեր էիր.
աւելի անուշ սեպեր էիր կիրակին երազել՝
բան զբաղումդ խորհիլ իր բոլոր դուռնա-
րով:

Պզտիկ պզտիկ, մեծ երազներ կ'ունենաս.
սակաւին կասարեալ մարդու կարգ չանցած,
հուկին վեցդ չ'արժեքած՝ աղջկան մը սեր-
տալ կ'սկսես, եւ մանուկ երեւակայութեանդ
մէջ տրամադրուած միակ մտածումը ամուսնու-
թիւնը կ'ընես: Չես աշտուղ չէ, կ'աշտուղ,
բայց երջանկութիւնդ վիժած բան մը կը
դառնայ քիչ ատենէն:

Ե՛ն ապահով եւ ե՛ն յաջող ճամբան՝
կրիայի պէս տոսիկ տոսիկ փախելէն, նա-
պասակի անվերայ ուսումներ փնտրու տր-
ուած է. մնացեալ շատերունը իրենց սրուն-
քին կոտորել կ'ընայ ըլլալ շատ շատ:

Դիտեցած բանդ պիտի ըսեմ, բայց կուգեմ
որ անկէ՛ մէկ չը գիտցա՛ծդ հանես դուրս:
Նայէ որ կեանքիդ համար սանդուխ մը ու-
նենաս. երբոր վեր ելլալուն է կարգը՝ միշտ
մէկ տեղ, մէկ տեղ:

Պիտի առարկես բէ տխուր բան է վար-
իջնալը. ինչի՛ր, հոգ չէ, բայց նորէն մէկ
տեղ, մէկ տեղ:

Անխորհուրդ սլացք հիմալ արծիւներն ալ

չունին: Միւս կողմէ անկում մը ա՛յն ատեն
անվնաս է՝ երբ գահավեժ չէ:

Կայներ՝ ասանկ ահում օրով ֆեզի ֆա-
րոզ կը կարգում: Շիտակ ես: Դառնանք
Զատիկին:

Կ'ուզե՞ս որ Զատիկէն առաջ դեպ ի ետեւ
ոստում մը ընենք, սանկ պզտիկ ոստում մը:

Մեծ-Պահին ի՞նչպէս անցուցիր օրերդ:
Հարցումս կրօնական գոյն մը ունի լոկ. ը-
սել կ'ուզեմ քե իբր ֆրիստենայ կրցա՞ր ապ-
րիլ:

Եթէ հոգիդ այդ եօթը շաբաթներուն՝ ա-
տեն ատեն ճանցած զգացիր այն ազնիւ խան-
դով — որուն « հաւատքի հուր » բացատու-
թիւնը կուտան կրօնի մարդիկ, — ու ելար
հինգշաբթի առտունները դեպ ի Ղալաթիա
չափել, պիտի տեսնես քիչ մը, որովհետեւ
կրօնային գիւղիդ ժամը այցելել, հո՛ւն աղօ-
թել, հո՛ւն լսել Արեւագալը:

Խորանին դարձած աղօթող ֆիշեր կերքան
հո՛ւն երբոր ըսեմ, ձեւ մի՛ ընեն ինձի, հա-
ւատա՛ միայն:

Իսկ եթէ բնա՛ւ չայցելեցիր Աստուծոյ տու-
նը, — վախճալով որ կանքել մը կ'իյնայ
գլխուդ, կամ գրպանդ տանողներ՝ պնակ-
ներու մէջ, — մեղադրելի ոչինչ ունիս վը-
րադ, եթէ երբեք գիտեր՝ պ սուկեւուդ, առ-
տուն՝ արթննալով շուրթերդ դողդուցին հո-
գեթուիս մտնուցով մը:

Պահ: Չէ՛, պահ բռնած չես, « ասոր
վասն եմ: Ասիկա սովորութիւն մըն էր՝ զոր
մեր նախնիք Ս. Հայրերէ պատուիրաբար ըն-
դունած էին, որովհետեւ կաղնիի պէս տո-
կուն եւ պողպատի պէս ամուր կապուր սւ-
նէին:

Ուրիշին իրաւունքը չունի. քե չի խօ-
սիլ, իր գործովը լոկ հետաքրքրել, դրացի
հաւի մը քրօս չըսել եւ դեռ կարգ մը ասոր
պէս բաներ՝ առաքինութիւններ եւ հիմայ՝
որ ամբողջ տարին պահէ բռնելէն յարգի
կ'անցնին Բրիտանիա:

Զատիկը եկաւ, զիրար շնորհաւորո՞ղ
շնորհաւորողի, ժամկոչէն բռնէ մինչեւ մեծ
աղան իր « հարկեցուցիչ » պատկերը ունի
կասարեւիք: Ափսո՛ս սակայն որ հարիւրին
իննսուն չեմ ըսեր քանի՛ն, վասն իմ քե աս
իրիկուրնէ բուրակի պէս պիտի արտասանեն

բանաձեւը այն տեղեւորական ողջոյնին ուր
Քրիստոնեութիւնը համակ կը խսանայ .
« Քրիստոս յարեալ 'ի մեռելոց » :

Վաղը փողոցներու մէջ ու տուններէ ներս
ոգեւորութիւնը պիտի փրփրի Սքազպուրկի
գարեջուրին պէս , նամբաները չեստ ցուցա-
դուումը պիտի կրեն կրնկրնացող գունագեղ
կօծիկներու , արդուկը վրան հագնուսներու
եւ օդին մէջ ճօճող ցայիկներու : Նոր կիրա-
կին պիտի գայ , կարմիր կիրակին , կանաչ
կիրակին , եւ ո՛վ մեջերնու խելք բնող պի-
տի ըլլայ Հաւաստին գարբնումը լծող բերել
բնութեան վերկենցաղումին :

Յկո՛ւր , ճղաւ , մեկդի դնենք այս խօս-
ները ամբողջ ու քեզի հետ հաւկիթ զարնուինք :

Ինչի՞ սակայն : Ոչինչի : Իրաւունք ունիս ,
հաւկիթով գրաւը իրեն պէս փցունք ամբու-
րին մը կ'ունենայ :

Կոսրեցար : Մի՛ կոսրուիք , կոսրողը հաւ-
կիթդ բող ըլլայ : Թերթի ի՞նչ սնօրեններ գի-
տեմէս ու ամեն ասեմ հաւկիթի տեղ սիրք
կը կոսրին . . . Իրենց ձեռքը ծանր բաժա-
նադներուն , որոնք սակայն պնտեղուանք
չե՛նք նորեն :

Այս խօսքիս վրայ Վահան խած-սկնցին
վրայէն կես մը ժպտուն կը դառնայ ինծի կը
նայի՛ չեմ գիտեր քե՛ իրաւունք տալով քե՛ չի
տալով՝ սանկ նանկ խօսքեւս գո՛նե՛ այս
վերջին դրուագին :

ԹԷՈՒԴԻՆ

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Պաղտատ . — Մ. Ս. էֆ. Ստացանք մէկ
ոսկին , բայց դեռ կէս ոսկի կը մնայ ձեզ
վճարել հաշիւներու փակման համար :

Նգիպտոս . — Կը խնդրուի մեր մեծա-
յարգ բաժանորդներէն՝ որ անյապաղ վճա-
րել իրենց պարտքը :

Պարտիզակ . — Բ. Վարժարան : Հոս չի
վճարուեցաւ ձեր բաժնեգինը , ուղղակի մե-
ղի շրկելիք կը խնդրուի :

Տրապիզոն . — Վ. Շ. էֆ. Եթէ կուզէք
որ թերթը շարունակուի , հաճեցէք տարե-
կան բաժնեգինը շրկել մեզ :

ԽՕՍՈՒԸՌՏՈՒՓ

(ՀԱՅՐԱԿԱՆ ԽՐԱՏՆԵՐԸ)

— * —

Ազնուականի պատուո՛յս վրայ կ'երդւնն-
աւ որ , այսօր , աշխարհիս երեսը , ո՛չ մէկ
վաճառական պիտի սնանկանար , ո՛չ մէկը
հարբուխ պիտի ըլլար , ո՛չ մէկ երիտասարդ
անգործ պիտի մնար եւ ո՛չ մէկ աղջիկ՝ տու-
նը , ո՛չ մէկ ճաղատին մազերը պիտի թա-
փէր , ո՛չ ոք ակռայի ցաւ պիտի զգար , ո՛չ
մէկուն պիտի պիտի ճերմկնար , ո՛չ ոք
յօղացաւ պիտի ըլլար , ո՛չ մէկ մարդ ան-
կուտի պիտի ըլլար , ո՛չ մէկ կին դժգոհ
պիտի ըլլար ո՛չ մէկու գործը անյաջող
պիտի երթար , ո՛չ մէկ առնելիքնոր իր
պահանջը պիտի կերցնէր , ո՛չ մէկ գը-
րագէտ՝ իր վերջին օրերը անցընելու
համար փոխանակ գիւղ մը երթալու՝ Ս.
Փրկչի Հիւանդանոցը պիտի երթար , ո՛չ մէկ
մարդ երիտասարդ պիտի մեռնէր , եթէ եր-
բէք սակայն ամէն մարդ մտիկ ընէր իրեն
տրուած . . . խրատները :

Հայրական խրատները . . . Zut !

×

Հայրական խրատներու ճակատագիրն է
կարծես . — աշխարհիս ստեղծուելէն ի վեր ,
հայրական խրատներ կը տրուին ու այդ խը-
րատներէն ո՛չ մէկը կը գործադրուին՝ նոյն
խել . . . դեղի համար :

Ամէնէն առաջ , եթէ մեր սիրելի նախա-
հայրը Ադամ հետեւած ըլլար՝ Ենովայի հայ-
րական խրատներուն , այսօր՝ փոխանակ
Հանրագիտակ պատուական շաքաթաթերթին
յօդուած գրելու , Երկնքին մէջ եան եկած՝
կլկլակ կը քաշէի կոր , առանց սակայն եր-
բէք նայած ըլլալու . . . արդիւրեւ պտու-
ղին համին :

Ընդհանուր մոլութիւն մը դարձած է
ա՛լ : — Ամէն մարդ , առանց բնաւ մեր
հայրը եղած ըլլալու , պարտք կը համարի՝
հայրական խրատներ տալ մեզի ու մենք
պարտք կը համարինք այդ հայրական խը-
րատներուն չհետեւիլ , ինչ որ չարգիլեր սա-
կայն որ մենք ալ մեր կարգին , ա՛ռանց եր-

բէք անոնց հայրը եղած ըլլալու, հայրական խրատներ տանք անոնց՝ գիտնալով հանդերձ թէ երբէք անոնց հետեւող մը չպիտի գըտնուի :

X

Ասանկ եկեր է, ասանկ կ'երթայ :

Դուք մեզի հայրական խրատներ կուտաք, մենք ձեզի հայրական խրատներ կուտանք, դուք մեր խրատներուն ականջ չէք կախեր, մենք ալ՝ ձերիններուն, և աշխարհ կը շարունակէ դառնալ :

Եթէ մարդիկ կարենային օգտուիլ իրենցմէ մեծերուն փորձառութենէն, այն ատեն ամէն մարդ խելացի պիտի ըլլար, որով պիտի խանգարուէր կեանքի աններդաշնակութեան . . . ներդաշնակութիւնը :

Ջարմանալի է սակայն թէ ինչո՞ւ այսչափ կը յամուինք տակաւին խրատ տալու ուրիշին, երբ առաջին անգամ մենք չենք հետեւած մեզի եղած խրատներուն :

Եթէ մարդ խրատով կարենար մարդ ըլլալ, հաւատացէ՛ք, ամենէն առաջ . . . ե՛ս մարդ կ'ըլլայի :

X

Արդէն բնազդը մեզի կը գրգէ միշտ՝ ուրիշներու խրատածին հակառակը ընելու :

Երբ, օրինակի համար, խրատեն մեզի սա հորը չնետուիլ, մենք անհուն փափաք մը կը զգանք այդ հորը նետուելու, միմիայն մեզի եղած խրատին հակառակը ըրած ըլլալու համար :

Ու երեւակայե՛լ որ, եթէ մարդիկ, առաջին օրէն ի վեր, իրենց եղած հայրական խրատներուն անսային, աշխարհ՝ այսօր՝ բոլորովին հակոտնեայ վիճակ մը պիտի ունենար իր արդի վիճակէն :

Նախ՝ ես փոխանակ անկուտի խմբագիր մը ու անկուտի դերասան մը ըլլալու, հաւանականօրէն կուտաւոր պաշտօնեայ մը պիտի ըլլայի չեմ գիտեր ո՞ր վաճառատունին մէջ և վարպետիս աղջկանը հետ պիտի կարգուէի, ապագաս շտկելու համար :

Ու այս կերպով, ըստ ձեզի, գուցէ մարդ եղած պիտի ըլլայի, բայց, ըստ իս, ամէն պարագայի մէջ, խրոյս բան մը չպիտի ըլլար :

X

Ո՛ւՖ, սա՛ խրատատուները :

Կեանքի մէջ չենք կրնար քայլ մը առնել, առանց հանդիպելու մարդու մը, որ բանը գործը կը ձգէ, հայրական խրատներ տալու համար մեզի, իսկ թէ իրմէ ատանկ բան մը խնդրող ըլլար :

Եւ, ամէն մեղքիս վրայ, այդ խրատները կուտայ՝ չնորհ մը ընելու պէս . . .

— Եթէ ուրիշը ըլլար, այս բաները չէի ըսեր, կ'ըսէ՝ ձեզի ակամայ ցանկալ տալով այն միջոցին այդ «ուրիշ» ըլլալու երանութիւնը :

Ձեր կարգուելու առջի իրիկունը՝ յաճախ կը հանդիպիք մարդոց, որոնք հայրական խրատներ կուտան ձեզի, ջանալով ետ կեցնել ձեզ ձեր գաղափարէն :

Բնական է ականջ չէք կախեր, և երբ քանի մը տարի ետքը, ձեր ընտանեկան վիճակէն դանդատելիք պատճառներ ունենաք, այն ատեն այդ մարդիկը կ'ըսեն .

— Եղբայր, ես իրեն ըսի, բայց մտիկ չըրաւ, փորձառու մարդուն խօսքը մտիկ ընելը ուրիշ բան է :

Եւ որովհետեւ, հիմա դո՛ւք ալ ձեր կարգին փորձառու եղած էք, երբ նշմարէք մէկը որ կարգուելու միտք ունի, անմիջապէս կը սկսիք՝ ձեր կեանքի խորունկ փորձառութեանը վրայ հիմնուելով, կրկնել ճիշդ այն միեւնոյն հայրական խրատները, զորս դուք մտիկ չէիք ըրած :

Նոր գործի մը պիտի ձեռնարկէք, ձեր զաւակը դպրոց պիտի դնէք, գլուղ մը պիտի երթաք . . . ասա՛ բոլոր հայրական խրատներ տուողները ձեր գլուխը կը հաւաքուին, ձեզի ճամբայ ցուցնելու համար և շարունակ իրենց փորձառութիւնը կը դնեն մէջտեղ :

Բայց, խօսքը մէջերնիս, եթէ մարդ փորձուի ականջ կախել անոնց, ո՛չ պէտք է կարգուի և ո՛չ գործի մը ձեռնարկէ :

Եւ, աւելի շիտակը կ'ուզէ՞ք :

Երբ ամուրի էք, այդ մարդիկը կուգան իրենց հայրական խրատները տալ ձեզի սա՛ կերպով .

— Եղբայր, կ'ըսեն, մինչև ե՛րբ այս կեանքը պիտի անցընես, կարգուէ՛, ամուսնութիւնը աղուոր բան է, մարդ վերջապէս՝ ընտանիք մը կազմելու է :

Ու երբ կ'որոշէք կարգուիլ, այդ միեւնոյն խրատատունները նորէն ձեր գլուխը կը ժողվուին:

— Կը զղջաս, ետքէն կը զղջաս, կը կրկնեն՝ չարագուշակ չեչտով մը. եթէ քու տեղը ըլլայի, հաւտա՛, մինչեւ ետքը ամուսնի կը մնայի, ամուսնութիւն, ընտանեկան հոգ, զաւակներ, հիւանդութիւններ...:

Ու կը սկսին՝ երեմիական չեչտով մը թուել ձեզի՝ ամուսնութեան բոլոր անպատեհութիւնները, ցաւերը՝ կսկիծները:

... Տէր Աստուած ամենակալ, ազատէ՛ մեզ սա՛ խրատատուններէն:

×

Ու, իմ կարգիս, խօսելու համար ձեզի... անձնական փորձառութեամբ, յիշեմ պզտիկ մանրադէպ մը իմ կեանքէս, — եթէ կը հաճիք:

Ատենօք — ո՛հ, շատ ատենօք... — սաստիկ փափաք մը ունէի խմբագիր ըլլալու, յօդուած գրելու և մանաւանդ... ստորագրելու:

Կ'ուզէի խմբագիր ըլլալ ա՛յնչափ, որ չափ աղջիկ մը չպիտի ուզէր... կարգուիլ:

Ու, ո՛հ, ի՛նչ խրատներ, ի՛նչ պատուէրներ, հայրական, եղբայրական, բարեկամական, մտերմական, ընկերական...:

Յուզուած չեչտերով կը պատմէին ինծի՝ խմբագիրի ասպարէզին ապերախութիւնը և, իբր գերագոյն վերջաբան, կ'ըսէին թէ այս ասպարէզը... ապագայ չունի:

(Եթէ կարելի ըլլայ ժողվել բոլոր այն հայրական խրատները զորս իմացայ, կարելի է չէնք շնորհ. հարիւր հատոր կազմել, ի պէտս անոնց որոնք միտք ունին խմբագիր ըլլալ:)

Երբեմն մարդ մը մեզի կուգար, և ան ալ, իր կարգին, կը սկսէր հայրական խրատներուն չիմ գիտեր քանի՛ հազարերորդ տպագրութեան:

— Զաւա՛կս, կ'ըսէր, սախը՛ն խմբագիր չըլլաս, տոքդո՛ր եղիր, տոքդո՛ր... որպէս զի մեզի նայիս:

×

Օր մըն ալ իմացայ թէ դերասանութիւնն ալ ապերախտ ասպարէզ է:

Ու յանկարծ... դերասան ըլլալու փափաքը մտաւ ներսս:

(Փակագիծի մէջ խօսելով, զարմանալի է որ ես մի՛շտ անհուն փափաք մը զգացած եմ բոլոր ա՛յն ասպարէզներուն նկատմամբ, որոնք ապերախտ են և... ապագայ չունին: Չէ՛ մի որ tous les goûts sont la nature!)

Ու դա՛րձեալ հայրական խրատներ, հայրական պատուէրներ, նորէ՛ն խրատներ ու նորէ՛ն պատուէրներ...:

Կը յիշէին թէ Ադամեան անօթի՛ մեռած էր, Թրեանցը մահուան անկողնին մէջ տասնոց մը չունէր, և միամիտ խրատատուններս չէին գիտեր թէ՛ այս բաները ինծի պատմելով, միմիայն փափաքս կը կրկնապատկէին:

Վերջապէս, քանի մը տարի շարունակ մտիկ ըրի այդ հայրական խրատները ու ո՛չ նուազ հայրական պատուէրները...:

Սակայն, բոլոր այդ բաները չարգիւեցին որ, օրին մէկը, դերասան-խմբագիր մը ըլլամ, ինչպէս գիտէք:

Ի՛նչ կրնաք ըսել, պարոններ, կոչո՛ւմը, արուեստին սուրբ հո՛ւրը ունէի մէջս:

... Սակայն, այսօր, երբ իմանամ թէ՛ այս ինչ երիտասարդը կը փափաքի կոր դերասան կամ խմբագիր ըլլալ, անմիջապէս ու չափազանց լրջութեամբ քանի մը հայրական խրատներ կուտայ՝ անոր, որպէս զի վազ անցնի խմբագիր կամ դերասան ըլլալու սեփականէն:

Ու եթէ մտիկ չընէ իմ հայրական խրատներս, իսա՛չ որ, կը ցաւի՛մ անոր վրայ:

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Կուղէ՛ք մէկուն հայրական խրատ տալ:

Ինա՛ւ հայրական խրատ մի՛ տաք:

ԿԱՎՈՐՇ

ԳԱԼ ՇԱԲՈՒ

ԱՐԳԻԼՈՒԱԾ ՊՏՈՒՂԸ

P.A.R.

ԿԱՎՈՐՇ

ԾԱՂԻՎԻ ՄԸ ՎԵՐՋԻՆ ԺԱՄԵՐԸ

Տժգոյն շափրակները կ'ամփոփուին տակաւ կծկուն, հովի կամիքներէ ասղնուած ֆրէքի մը պատրաստով նիհարցած. բոյլ զրուխը բխրեղ նեցուկին վրայ կը յենու լրկուն, ու մարմինը պատրաստած իր հուսկ շունչը կը փչէ: Միւնց դեռ հաւատարիմ մըրնորոջը անոր անո՛յճ անոյճ բուրումը կը պահէ իր մասնիկներուն մէջ, ուր երանութեանց խուսափուկ օրօր մը կը ննչէ խաղաղ:

Կիսագաղջ շունչ մը կ'ոգեւորէ զայն տակաւին, անհամոյ, խոնաւ շրջանակ մը կըրելով անոր հիւանդ մեջքին շուրջը, որուն կպչուն՝ շեղուակները կը թափրփին, կը փրփին. կոթիկներու կմախքը միայն՝ որ կ'ստացուի կը հսկէ իր ոսկերուն սակ թացուած գերեզմանին, ուր իր զաւկին հոգին թերթ թերթ կը թափի. . . : Խեղճ ցոյունիկը, որ զայն կրեց իր վրայ երկա՛ր, ֆանի մը երկար շաքարներ, զարդի բարակ գեղորին մէջ, բոլոր ուժովը ծծեց ջուրը մեցրնելով ծաղիկին բոլոր մանրիկ երակներուն, որպէս զի չմեռնի ան, որուն ֆաղցրաբոյր ստուերին սակ իր կեանքը կ'ըլլար հեղիկ ու անդորր:

Ինչ ճակատագիր մըն էր իրեն համար արթուն հանդիսասեւը ըլլալ անոր դառն հեծեծանքներուն, որուն հոգին կը ֆակուէր: Եւ բանաստեղծութիւնը որ իրմով կը սկսէր կը լրանայ իր մէջ անշշուկ, պուրակի օրերուն ցնորական ստուգութեան հետ:

Թերթիկները կը դառնան, թերթիկները կը վաշտեն, գերեզմանի պար մըն է տակաւ, որուն դաշնակութեան նուագը կը հիւսեն, ա՛յնքան բնականօրէն, զօս մարմնիկները ֆարէ ընկունարանին վրայ, ուր դրուած է զիրենք կրող նուրբ գեղորը: Պատահանքն ներս եկող իրկուան ծոյլ հովը կը մղէ զանոնք միշտ պարելու, տեսակ մը յուրարկուն ըլլալով անոնց ոչինչ դարձած թերթէ եռութեանց:

Մեկ ֆանին կ'իջնան վար ոլորուելով, ուր անցորդին անխորհուրդ ֆայերը ճակատագիրը կը գծեն, հոդին հետ նոյնացնելով

զանոնք, որ ասեն թերեւս ցաւի արցունք մըն ալ սեղմուի իրենց մէջ:

Մեռելական նուագը հա՛մը թայց ազդու, կը շարունակուի մնացողներու այդ խօշ պարին մէջ: Վերածնութիւն մըն է տակաւ, մահուրէն վերջ կեանք մը, կեանք մը բանաստեղծութեան բոլոր թափունքը բոյրերով գեղեցիկուած, խօսուն եւ ընկճող:

Այժմ յոգնած հետեւեկէ այս փափուկ պատկերին, ու միտքս դադարած յերթեկէ պարագաներ իմ վրաս, ու ինծի համար, չեմ գիտէր ի՛նչպէս կ'ենթարկուիմ յանկարծ նուագի մը ցնցող սարսուռներուն: Անբողբ երեւակայութիւնս բռնուած է ձայներէ, որոնց մէջ մեծ դժուարութեամբ կը զանազանեմ անորոշ վանկերը, որ ջութակի մը զգայուն շարերուն վրայ կը յօրինեն ա՛յնքան դասականօրէն՝ Մեռելներու պարը:

ՀԱՅԿԱՆՈՅԵ ՄԱՌԻՔ



ԾՈՂՈՐՆ ԳԻՐԵՐԸ

Մեղմիկ հա՛վը կը փրչէ՝
Յուզելով ջուրը ծովուն,
Լոյծ-կապոյտ վէս ի վէս՝
Կը բարձրանայ դեպ ի վեր:

×

Երկնից կապոյտ կամար՝
Անթիւ պապող՝ւն լոյսերով,
Ծիր-կաթինն ալ լուսաբոյ՝
Կը փալփրլին՝ շողջողուն:

×


Ալեակը՛ ծփան մէս ի մէս,
Կոհակներն ա՛լ փրփրելին.
Եւ ալեծուփ նաւակ մը՝
Բաղխի ժայռին անխաբխաբ. . . :

ԱՆԴՐԱՆԻԿ ԵՍԱՅԵԱՆ



ԹՈՒԱԼԵԹ, ՎԻԶԻԹԱ ԵՒ ՀԱԻԿԻԹ

ԶԱՏԻԿ...ՑՈՒ ՅՕԴՈՒԱԾ



Սառա Պեռնատի համար կ'ըսուի թէ, իր répertoireին բոլոր խաղերուն յատուկ քօթիւմներ ունի, որոնցմով կը պնդուի աշխարհահռչակ արուեստագիտուհին, և մինչև իսկ ամէն վարպետի կը փոխէ իր տարազը: Միթէ ես ալ առանց Սառա ըլլալու, (վրաս բարի) նոյնը չեմ ըներ ամէն շարժու եղանակին, առիթին համեմատ փոխելով նիւթ ու ոճ:

Նա' նոյն իսկ այսօր ձեզի ծաղիկի քթին յօդուած մը Զատիկ-ձու ինչպէս խօստացած էի:

Քրիստոնեայ աշխարհը Զատիկը երեք օր կը ճանչնայ, բայց ներկեցէք ինձ ըսել թէ Զատիկը Աւագ-Երկուշաբթիէն կսկսի մեր հայ տուններու մէջ, քանի որ այդ օրերուն, ընտանիքներ երանեալ տատանեալ բան մը կըլլան, խըզմեքի, եկեղեցիի, և կերուխումի երրեակ զբաղումներու շնորհիւ և բուն Զատիկի երեք օրը, որոնք միասփիրտունի օրերն են, կանայք գործ չունին, պատուհանին առջև խուզի քէստանէսի ուտելէ զատ:

Ուստի քանի որ Զատիկի վրայ յօդուած մը պիտի գրեմ, կսկսիմ Երկուշաբթիէն:

Երկուշաբթի

Օր ճամսարեկաբանութեան, և տախտակաշիջի, թողերը առնելու, կապեալ զճերմակ եազմաս ի ղլուխ, և սոթթաւորեալ զկողոտ բէշերս ի մէջքի, ցուցադրեալ զբիւրիճ տոտոխներս, չըջապատեալ քառօ թանթէլայիւք և այլն:

Այսպէս պէտք էր զրուած ըլլալ օրացոյցին մէջ, քանի որ այդ օրին, այսինքն Աւագ-Երկուշաբթիին անպատճառ պատուհաններու ապակիները կը մաքրուին ու գետնի տախտակները կը չփուրին: Զատիկուան այս պատրաստութիւնը զրեթէ ամէն տուն կը կատարուի:

Եւ չիտակը ըսելու համար այն ամէն և

րիտասարդները որոնց իտէալն է առանց արուեստական թուալէթին տեսնել օրիորդ մը և կամ զօքանչ մը, անդամ մը բաւական է այս երկուշաբթիին անցնին ո' և է թաղի մը մէկ փողոցէն, ու պիտի տեսնան անհաղնիմ զօքանչ տուտունները չալը սիւքիւր-կէսի մազերնին վեր սոթթած, հին խալալուր բէշ մը մէջքերնուն ի վար, բէլթէներու կըտոր մարմիննին կէս մը բաց, եամուու եումուու ոտքերնին մերկ, իրենց տան դռներուն վրայ էշիկը չփելնին: Մինչդեռ վերը փողոց նայող շահնշիրլի սենեկին պատուհանին առջև օրիորդ խուչիկներ, մազերնին ճերմակ եազմայի մը մէջ, լեսե ալէ չըլըթ թուալէթով մը, ապակիները չփելու զբաղած, որոնք տեսնալը, կարծէ գաղափար մը կազմելու համար այդ կարգի մահկանացուներու առանին վիճակնին վրայ:

Երեքշաբթի

Օր իջեւանելոյ ի Բերա և գնելոյ զչատու գլխարկս հանդերձ խօռոզ փետրաց, օլուխի պէս վատնելոյ զ'ոսկիս բաղումս և զերգ զթերթօզ պօռուսու մսիւկոյ զմէճիտիէներս:

Ահա այս օրին է որ մեր հայ տիկիները օրիորդները կերթան փետտուիլ Բերայի խանութպաններուն իրենց Զատիկ-ձու գլխարկները և այլ ամանամուտի պիտոյքը հոգալու համար:

Ինչպէս պղտիկները եճեկ-պէլիլի, նոյնպէս կիները նոր դնում մը չըրած՝ չեն կրնար տօնել Զատիկը:

Անպատճառ Աւագ Հինգշաբթիին պիտի հասցնեն՝ իրենց նորը, իրարու աչքի մէջ նայելով նիւպէթ ընելու համար, դուռ դըրացիի հասկցնել ուղեւով թէ «նայէ... իլլաւորս ինծի կոկեց...»:

Օրինակ մը տանք, աւելին, նկարագրենք Երեքշաբթի օր Բերա, Մարկոթի խանութը գտնուող ընտանիքի մը խօսուող տուքը որ պիտի կրնայ կենդանի պատկերը ըլլալ այդ կարգի մահկանացուներու:

— Բա ինձի նայեցէք, հիմա ճուշակաւ մօտաներէն ըլլայ, էթա՞ք լան, ճակատը պասը, ետին ալ խառաման խոյնիկի պօշի պէս կէնիչ տէ վար տառցած . . . :

— Էյ հա՛ւամա բէք սուղ կուզէ կոր, եռմուռնախ կնիկը, ինտո՞ր ալ հասկցաւ քի աշուրնիս վրան մնաց տէյի . . . :

— Տուն հիչ մի խառնուիր, քիթդ պերանդ թթղեցուր դուրս ելիր, անո՞ք մեզ կը կանչեն . . . :

— Բա նա՛սը կանչել, մտնող ելողը նայէ, խանութը այազմայի դուռի պէս կը պանի կոր . . . :

— Աման տուտուս, ըլլայ նէ աս չաբխան ըլլայ, եանի չառխի պէս դուրս տուաւ սուռաթս . . . :

— Դուն մէջ միյնար, ձգէ քի ֆուլիկը ճուղապը կըլրէ . . . :

— Էյ սօն ֆիյաթ . . . :

— Սօն ֆիյաթ իբի պուշուք լիւս մատամ . . . :

— Էյ չէ՛ . . . կարողութիւնս չի հասնիր վազանցայ . . . չի հասնէյի տեսնալու . . . :

— Բա ճանրմ անճրուկները թէքէնիդ մա՛ւնէք, ես անոր զիհնը չէլմիչ կընեմ հիմա ճուկ, դուք դուրս ելէք . . . :

— Կողմին պերանը երթայ հէմէն, սա նայէ, երկու աչկի առալըս խութին կոխեց քա՛ . . . հի՛ . . . :

— Ձեզի պան մը ըսեմ . . . ասանկ օրի զաթը պան չառնուիր, երկու շաքաթ առաջ կալու էիք . . . :

— Ա՛խ . . . սիրտս վեր մի հաներ . . . չուներու պէս եալվար եղայ քի սա աղջկանը շաքխան առնուի տէյի, ըսըմպըն տըռմսըն պիլէ չըսաւ . . . :

— Ա՛խ . . . իմ էրիկս նայէ, փոս պըյըլին մեռնիմ, երկու ըռախիով չորս ճիւղէով պէճէրուեցայ . . . :

— Էյ հէլպէթ, դուն թագէ էս քուրուկ . . . :

— Գործը թագէին պայաթին վրայ չէ . . . էրիկմարդ խամին բունար զիտնալու է, նէ իսէ հիմա ճուկ գործերնիս տեսնանք տէ ըսելով ուրիշ գլխարկներ կը նային ու դրամնուն համեմատ իրենց գնումը կընեն . . . :

Տեսաք հարկաւ Երեքաթի իրինկուն կամուրջին վրայ, այն բոլոր տիկիները ե

օրիորդները, որոնք գլուխն նորոգած, ձեռքերնիս ալ հիները բաքէթ բաքէթ շոգենաւ կը մտնէին . . . :

Սովորութիւն մը որ ջիւղերս ոտք կը հանէ, չեմ գիտեր ձերինը . . . :

Ձորեքչաքի

Օր կոկելու զպուլուզաս, տարւոյ արցելոյ մինչ կէս օր, և օր բաղանեաց . . . Այս օր կանայք երթան ի բաղանիս զերդ հօտեկս, և մաքրուին վասն տօնելոյ զՋատիկ . . . :

Ինչպէս միւս օրերը Աւագ չաքաթին, Ձորեքչաքի ալ կանայք իրենց անցեալ տարւան պուլները կոկելով կը բաղին ու ցերեկին տաք տուն կ'երթան, երկուշաբթի օրուան աղտոտելնիս մաքրելու համար . . . :

Օրինակ մը բաղնիքի տեսարանէն . . . :

— Երկու աչկդ խաղա Բառանձեմ . . . միաբէս ալ անցար քի հոս կըլլաս տէյի . . . :

— Սուս եղիր քուրուկ օրդնոտեցայ օրդնոտեցայ ալթըխ ինչ կըլլայ նէ ըլլայ ըսի նետուեցայ . . . :

— Բա մարիկ խօսք մէկ են ըրերի պէս բլթինն ալ աս օրին են պէլէյէր . . . սա նայէ . . . :

— Ո՛ւր է . . . Բուբուլը, հետ չեմ առեր . . . :

— Աման քուրուկ, չիտեմ հիմա ճուկուան ճահիլները Ջատիկն մազերը ֆոօզօ չի բռներ տէյի պաղնիքէն եղաւ խնթ շունը . . . կլոխը ըսես նէ թէփերուն մէջը կը լողայ կոր . . . :

— Հախ ունի ամա աղջիկը, պաղնիքն ալ փատ կը կտրեցնէ սանքի . . . :

— Սանճիդ նասըլ եղաւ . . . :

— Տահեկին ըսածը չիտակ է եղեր, չօճուլս մը պերես նէ կամնի կըսեն կոր, ամա՛ . . . :

— Էյ զօռ պան մը չէ՛ ես . . . ունեցիր դուն ալ . . . առապան չորս թէքէլախով կիթթայ կիտեմ ես . . . տէօրտիւնճիւտ պէլքի մանչ կըլլայ տէ ցաւդ ցեցդ կառնէ կը տանի . . . :

— Աման մըսեր քուրուկ, վրաս մարեկիք կուգայ կոր, եանի Վրդանէս աղային անկածը ինայ նէ կա՞յ ես . . . եսխաս չի ձգեր . . . :

— Դուն գիտես ամա . . . :

— Տահան կայ, Բուրուլիկիս պերնին լոխմա փնտոնին իբէն հիմա ելլամ սօն տարիքիս լօհուսայ ըլլամ նէ էլ ալէմը ինչ կըսէ . . . :

— Աման դուն ալ պարակը փնտոնս նէ չի գար ելլար . . . անէքի պէտքութիւն ունիս նէ իւաճի պէս մէկ հատ մը դուրս տուր . . . :

— Նայինք ալթըրի, սըխտորի լաբա ըսին, էյէր ուլիչ չըլլայ նէ չար նաչար պիտի պերեմ, ինչ խալթ ուտեմ . . . :

— Հայտէ չըխմանիս ընենք, երթալով խալապալըմը կը կոխէ կոր . . . :

Հիմզաբքի

Օր աղօթքի և եկեղեցասիրութեան : Այս օր կանայք և աղջկունք, հագուած զնորանոր զգեստս, և եղեալ զքերեօյախ շարխասիս, ծածանեալ զէկոէթս և զխօռօզ թիւյրս, դիմեն Տաճար վասն աղօթելոյ և ցուցադրելոյ զնորաչէն քօթիւմս խրեանց, ի վերայ խըզ խըզի եւային :

Աւագ օրերուն ամէնէն նշանաւորը հինգշաբթին է, ինչպէս գիտէք, այս օրին չորս անգամ եկեղեցական արարողութիւններ կը կատարուին, անպէս որ ջերմեանդ քրիստոնէականներ գրեթէ գլխարկին գլուխներնէն չեն հաներ :

Մենք հոս միմիայն երեկոյեան եկեղեցիին վրայ խօսելով պիտի նկարագրենք մեր հայ տիկիներուն եկեղեցւոյ մէջ ունեցած կարգ ու սարքը :

Ամբողջ եկեղեցին լեւի-լեցուն է ալ, այնպէս որ այրերէն աւելի կիներ գրաւած են Աստուծոյ տաճարը, բոլորն ալ քուքլաներու պէս կը ճընդը վրան թուալէթով :

Ժամկոչներու քրտինքը ջուրի պէս կը վազէ ճակատնուն ի վար, ու շալվարնուն պոչը թուցնելով այդ մէկ օրուան մէջ տարուան մը բացերնին գոցել կը ջանան, մինչ թաղականները նասըրնին չի սեղմելու համար լայն թեթե կօշիկներով պնակնին կը շրջագայեցնեն կօսն բէշերու մէջտեղէն :

— Քա ճանրմ հիմա թաղախին սըրան է . . . չօք չէյ . . . տըւլիկ չիգայ քի թեւըս խաղցունեմ տէ երեսս խաչ մը հանեմ . . . :

— Էյ Տէր ողորմեայ, ըսանաթ ուտել խմելդ չամանուտա էս տառցեր, որի մահանա կը գտնաս կոր, կայնած տեղդ չորս չօճիւթով ֆամիլեայ մը կը սըղմի . . . :

— Քա առ ո՞վ է նայիմ, պագ օրով միսըս ուտողը, չան զաւակ, կերեր եմ նէ ճատը մօրկանդ մալը մէլալը չէ՞ եա . . . էրկանըս քէսէին պէրէքէթ . . . :

— Իէսիմ քէսիմ կաս հէմէն . . . սա նայէ կէօյեամ հաղորդուիմ պիտի հա . . . նալլէթ սուռաթիդ ըլլայ բօստալ մը պըռէքիմ . . . արունս տէրիս տակը խայնաթ միշ ըրաւ քա՛ . . . :

— Խայնար ճուրերը ինչաս հէմէն տէ ըղը ըղը կայ վուճուտդ . . . իժի ծընունդ . . . :

— Քա որի հալաս կընես կոր . . . :

— Շ . . . շ . . . շ . . . շ . . . դ . . . ճանապարհ (թաղականներուն թափօրը կանցնի նոյն պահուն) :

— Քա քուղում օնիքիլէր աղաներս . . . սա բօստալին պերնին չալը տուէք քիշ մը, ժամըս ժամ ընեմ . . . մեղքը կը մտնամ կոր . . . :

— Եկեղեցւոյ պայծառութեան պնակն է . . .

— Ու ձայները կը կտրին դրամականին առջև :

Ուրիշ պատկեր :

— Ախ հոգիս ինտոր ընէինք . . . :

— Հոգըդ անգամ մի ընէր, ես հիմա ճարը կը գտնամ . . . ինծի նայէ ժամկոյ աղբար :

— Հրամմէ աչիլիս լէօսը . . . ինչ կուղիւս . . . :

— Գուղում ժամկոյ աղբար, սա նէֆթի ֆիսսանը աղջկանը ըսէ քի մեր քովը տեղ կայ, հոս գայ տէ քիշ մը ճըլճըլանք . . . :

— Հիմա գործ ունիւմ հոգիդ ուտիմ . . . սըրան չի . . . :

— Աման ժամկոյ աղբար պախշիշդ կուտամ իլէ ըսէ . . . :

Ժամկոչը ի լուր մամոնային, ձեւքի վառելիք մոմը կը ձգէ ու չիտակ այդ օրիորդին մօտենալով :

— Որիորդ . . . հունակեկաց տիմ տիրէկ կայնուկ աղջիկն ասէց ուր ֆէօս դայ, ճալա ճուլա տի անէք . . . :

— Ինչ կըսես ժամկոյ աղբար . . . չեմ հասկնար կոր . . . :

— Հէտս եկուր իւր խասկնաս . . . :

— Տեղդ չնդուկէ քա՛ . . . կըսէ մայրը թեւին կամիթ մը դնելով, սըւոր սըտե՛ղն ալ ըրածնիդ կընէք կոր . . . :

— Մամաս Բերուզիկինք են, կարծեմ հոն աղէկ տեղ մը կայ քի խապար են ղըրկեր . . . :

— Սէյրի տեղ չէ ասոր հոստեղը, օսկոռներդ կը կոյրեմ հա' . . . նոյն ատեն քահանան կանցնի . . . :

— Քահանայից . . . նայեցէք ողորմեցէք . . . :

— Աֆէրիմ տէր պապաս, աղէկ օր փարայի դուն ելար, ինծի չէյրէկ մը աւրէ տէ, երէկ առտու քսան փարայ ալ թէրէթիին համար տուիւ նէ անցնելիքէն, ան ալ վար դիր վրայի թառափը տուր . . . :

— Օրհնած, ասոր աստեղը սառափի ճամէքեան է . . . Տէր ողորմեայ . . . ինչ հիսապ ունիս նէ տուն գամնէ կը տեսնանք, հիմա բան մը պիտի ձգեմ . . . :

— Էյ չէնէ Տէր պապաս, քու պախալէդ ութը իլիմօն ալ ղըրկէ տէ ամէնը մէկ տուն օրհնենքին կուտամ . . . :

— Քահանայից պնակը . . . անտես մի առնէք . . . :

Պատկեր մ'ալ :

— Ըսի' . . . ախ չըսեմնէ' նէ իսէ . . . ինչ ֆայտա' . . . :

— Էյ աֆէրիմ սապըռ, ես ըլլամ նէ մազերը թեւս կը փաթթեմ տէ անանկ կը դըրօշմեմ . . . :

— Հապա' . . . հիմաճուկուանները ծեծ կուտեմ եա' . . . բէք քի չըլլայ նէ կը ձըգեմ կը փախչիմ կըսէ կոր . . . չան զաւակը . . . :

— Էյ տղան ինչ ջուրի վրայ է . . . տօմուզին եաղը էչիկին քսել տուր ըսինէ ըրի' . . . :

— Քա սուս եղիր քուրուկ, կնիկը ուշ վախիթ կացեր է քի քսէ տէյի, մէկ թիէն քսէր, մէկալ թիէն չուները եկէր լիկեր են . . . :

— Էյ կայնէ քի ըսեմ, պան մըն ալ կայ . . . բաբաթեայի թող կառնես, քիչ մըն ալ խայա թողի, աղուոր մը կը ծեծես, լէօպով մը տղուն սօլ ճէպն ի վար չըլսն կընես կը ձգես, երկու սահաթէն հէօքմը կընէ . . . :

— Աման դուն ալ թոռտոնայ տուտու, թահաֆ կըսես . . . թախտապիթի' է հէրիֆը . . . :

— Դուն գիտես, չէնէ կլիս կլիտու տուր երթայ . . . :

— Դպրաց դասուն պնակն է, անտես մի առնէք . . . :

— Ծօ Բէօրէ' . . . տէմինքի ծանը քուկինն է' . . . :

— Այո' . . . ինչ կայ . . . ինչո՞ւ հարցուցիր . . . :

— Խըռթլախը սիրեմ . . . ամա ըսի քի Բէօրէ' ճանիսն է աս ծանը տէյի, հիմա կէնէ պիտի կարգամ . . . :

— Նայինք, կարելի է :

— Պերէրնէ ես ալ կը կարէի, ինչ է ան շապիթիդ վրան կոխեցին ինչ ըրին, թէբէ կէօզ կուտուճախները . . . :

Պատկեր մ'ալ :

Իիշեր է, մութ փողոցին երկայնքը մէկ երկու տունուոր լացի կերթան :

— Թիլիլ թիլիլ կուգամ կոր, քէչկէ Մանիէլ աղային բալթօն վրաս առնէի . . . :

— Աման դուն ալ, հիմա խալապալընը մտնանք նէ ծան ծանի կուտանք կը տաքնաս . . . :

— Ֆիլօմէն առջիս անցիր, իրար խայիպ չընենք . . . :

— Աման տուտու բէք թօհաֆ էս, իշտէ կը քալեմ կոր, կիրկդ ելլալու չեմ եա' . . . :

— Աղջիկ էկէր որ քի տապաններդ նասըր չի կապեց նէ ալթըն կապելիք չունի, կէճէ խուլիի պէս գիշերը պիլէ պորտը դուրս ձգեցիր . . . :

— Հաւատով եմ քուրուկ, հաւատով, քէչկէ մերիններն ալ ասանկ ըլլային . . . :

Տաճարին մէջ :

— Քա ֆարադա սըտեղը լուս մը տընէ կէին . . . :

— Նայէ քուրուկ ասանկ կըլլայ, եկուր սըտեղը տիտիկ ըրէ . . . :

— Ֆիլօմէն առջիս անցիր . . . :

— Էօֆ . . . կուող խմէք . . . լէշ է սատկեր գիտես քի . . . քա մարիկ ասանկ գիշեր ալ կը ճնկեն եղեր . . . սայղըսըզներ . . . :

Գաւիթին առջև նստող մը :

— Ինծի նայէ տուտու, ան քուկին քիթը հոտեր է . . . հոս խմող չիկայ . . . ասոր սըտեղը պաղնիք պիտի տառցունէք . . . սուս եղէք տէ Աւետարան մտիկ ընենք . . . :

— Քա սըտեղէն շամալը մը վառէ նայիմ . . . ո՞վ է ատ խըզամուխի պէս հուրքը դուրս տուողը . . . :

— Ես եմ ե'ս, ինչ կայ . . . այնտող ճատըսի . . . :

— Ծօ' եալապուխ սուռաթիլը շուն, ո՞րի ես նայիմ . . . իս ճաչցի' . . . :

— Սո՛ւս . . . ամօթ է քուրուկ, ամէնքը հոս կը նային կոր, հիմա կելլան բան մը կը հասկընան մութ տեղը . . . :

— Դուն ինչ կըսես կոր քա, քօթէ չեմ ըներ կոր եա' . . . չօք չէյ, հէլպէթ

լախըստըն տեղը պիտի դընեմ . . . ըսելով
քիչ մ'ալ կառնեն կ'ուտան և ձայները կըտ-
րելուն . . . :

— Ամա՛ն . . . աս ինտոր ալ բօթինս կը
սխմէ կոր , սանկ հանեմ տէ պուտ մը նէ-
ֆէս առնեմ ըսելով խառամանտոյ պօթիւրը
կը հանէ քովը կը դնէ :

Եկեղեցիէն ելլալուն հրը տուտուն կօ-
չիկը կը փնտռէր :

— Քա կտորճիկ մը տիպէ վեր առ ֆօ-
թինիս թէքը կտնամ . . . :

— Նա՛ . . . չիկայ իշտէ , նասըլ ֆօթինս . . . :

— Տէր ողորմեա՛յ . . . հիմաճուկ քովս
էր . . . երկու աշուրներդ քէօռնայ քի ա-
սանկ գիշերով իս մեղքը կը թաթխէք կոր . . . :

— Քա տուտու՛ւ . . . թէք ֆօթինս՝ եկած
չըլլա՛մ . . . :

— Խառնախտի , թէք մնաս հէմէն վըռթ-
կած չուն , ձեզի պէս ըռէհինով փարայ չեմ
վերցունէր քի , տանիմ տէ թէֆէճիս տամ ,
էռնունը հինգ զրուշ եմ համբէր . . . :

— Գտա՛ր տուտու . . . :

— Ժամկոչ աղբար խառամանտոյ ֆօթի-
նիս թէքը . . . քա հիմա՛ հո՛ս էր . . . :

— Քա քուրուկ քեզի խրատ տուող չեմ
ամա , կուղես նէ Աւագերեցին ըսենք տէ
ծանուցում մը ընէ . . . :

— Քա կեցիր նայիմ , երկու աշուրներդ
քէօռնայ հէմէն քա , ասանկ գիշերով , կըսէ
ու մէկ ոտքը բոսիկ դէպի առաջ կանցնի
Աւագերեցը գտնելու , մինչ ժողովուրդը
սեկնած էր արդէն :

— Դուզում Տէր պապաս , չես ըսեր
գլխուս եկածը . . . :

— Խեր ըլլայ օրհնած . . . քունս ալ ե-
կաւ ամա պատմէ նայինք . . . :

— Երկու աշուրներն քէօռնայ , կիւզէլիմ
խառամանտոյ ֆօթինիս թէքը աշըրիշ են
ըրեր . . . ծանուցում մը ընէիր . . . :

— Օրհնած աղէկ ամա , մարդ չի մնաց ,
որի՞ պիտի ընենք ծանուցումը , հէլէ լուսնայ
տէ նայինք ի՛նչ կընենք . . . չօք չէ՛յ . . . :

— Քա արեւուտ կոտորտիմ Տէր պապաս ,
հիմա նասըլ տուն երթամ . . . :

— Սըտեղը իրիսկիներն հիները բաքէթով
դրած է , հագիր տէ գործդ տես . . . ըսե-
լով կը ճամբէ :

Ու մեր ճատը նինէն երբ հայհոյելով ա-
նիծելով տուն կը հասնի իրեններուն հետ ,
չախչախին վրայ գլուխ մը սխտորով կախ-
ուած կը գտնայ կօշիկները , ի մեծ զարմա-
ցումն իրեններուն և մեծագոյն զայրացումն
իրեն :

ԼԻԼԱ

ՈՒՂՏԵՐԸ

Պոսսայական ֆուրներու պէս խորհրդաւոր ,
Ուղէտը շուն , մտասանջ ու ակնապիշ ,
Կը ֆաշեն ու կը ֆաշեն . . . :

Անապասին խարկ առազին մեջ կը մխուի
Ոսկերն իրենց լայնափեռեկ :

Պարանոցի զանգակներուն ձայնը իսուր

Անարձագանգ կը մարմրի

Անեղբուքեան սահմանեկն դուրս :

. . . Աւանդութիւն մը կըսէ թէ ուղէտը ,
Ոսկի , կնդրուկ , հաշուէ , Լարդոս կը ճանկին
Երազային աշխարհներու եւ կեանքներու

դիւրանիքն :

Սակայն հիմա ծոյլ ու դանդաղ ,
Չանձոյթներու ճակ արտաքէկ կը ճամբորդեն :

Կարաւանին թիկունքն ամբողջ կը շարժի ,

Իրերակից թշուառիքայ

Որ քաղցունկէ՛ն կարծես ճեղքէ կ'երեւակայ . . . :

Կանցնին , կանցնին կեանքի օրերն ալ այսպէս ,
Ոյդ ուղէտնու կարաւանին պէս անշուք ու
ծանրաքեռն .

Ո՛ր են արդեօք երբեմնի կոյս զգացումներ ,
Եւ խնկաւե՛ս մեր բաղձանքներ :

Հիմա շին , քաղցունկ ու վիշտ քեցած կը սահի
Մեր օրերուն լեռնաշղթան .

Մեր հառաչները՝ զանգակներու ձայնին պէս ,
Կը կորսուին , անհետ կըլլան անարձագանգ ,
Եւ մեր սիրտը կը խանձո՛թի , կը մրկի մա-
հաշուք :

Բայց ի՛նչ օգուտ . . .

Կարաւանը կ'անցնի յաւե՛ս

Իր դանդաղիտ , պաղ , անողորմ .

Շղթայակա՛ն զնացով . . . :

ՅԱԿՈԲ ՏԷՐ-ՅԱԿՈԲԵԱՆ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

Ս. ԶԱՏԿԻ ՏՕՆԸ ԿԸ ԶՆՈՐՃԱՌՈՐԷ

ԻՐ ԱԶՆԻԻ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ

ԼՈՒՐԵՐՈՒ ԲԱԺԻՆ

Բարեպաշտութեան հուրովն ուռուցիկ ,
 Եւ ցուցադրումի տնչէն բրուցիկ ,
 Պօլսահայ կիներն աղուոր կամ սրգեղ ,
 Գրպաննին լըցած պանիր ու փոկեղ ,
 Աւագ շաքարուան այս մեծ օրերուն ,
 Ուզելով անցընել կեանք մը երերուն ,
 Երբ իրենց սիրուն ոտներն ուղղեցին
 Դեպ իրենց բաղին սուրբ եկեղեցին ,
 Ուր բոս հրմաւանդ բարուց ալ , ծաւեր ,
 Բընական է որ փըռեցին *միներ* ,
 Եւ հոն ըսկըսան զերդ հեռագրաբէլ ,
 Խօսիլ անդադար ու շաղակիւտեղ ,
 Մինչ մեր գեղանի եւ պէ՛րն աղջըկունք
 Գրանելու յոյսով իրենց մի թիկունք ,
 Զանգեւ ըրին մե՛ծ եւ նորանընա՛ւր ,
 « Որոնց ի տես , ո՛հ , սիրտ չէր դիմանար ,
 Եւ աղօթներով հակիրն այլ ազդու ,
 « Ո՛վ Աստուած , ըսին , մենք որ , այս շաքարու ,
 « Գիշեր ու ցերեկ , ծով բռնելէ զաս ,
 « Իրեւ զաւակներդ անգին , հարազատ ,
 « Սաղմոս ու Նարեկ հաղեցինք համակ
 « Եւ այդու եղանք , ո՛հ , կորաւամակ ,
 « Բաւե՛ք՝ մեր մեղքերն ու տուր մեզ ընծայ
 « Ինչ որով յաւե՛ս կոյս մը կը ցնծայ ,
 Զի անցընեւ մըսքս բընաւին ,
 Թէ մեր գրաւար աղան տակաւին ,
 Որ ո՛չ սիրտ ունի եւ ո՛չ ալ , բոս իս ,
 Խիղճ մը , դիմելով , ափսոս , նուաստիս ,
 Աւագ Հինգեաբքի օրով գեղեցիկ ,
 Զայնէ պի՛ս նորէն , նո՛ւրբ , երկարաձիգ ,
 Ու դիմելով մըն ալ խոժոռ կամ *ափս* ,
 « Բարեկա՛մ , երես մը դեռ կը պակսի ,
 « Ու պէտք է որ ինձ փութով , անյապաղ ,
 « Զեռագիր մը տա յսակ կամ հապաղ :

... Ու հիմա որ , այս բաժնիւման տակ , ու
 Ընթերցողներուս սերովն ահաւկու ! ,
 Բայց ենթակայից հոգ չէ թէ ի ցա՛ւ
 Պակտած երեսին կեսն այսպէ՛ս լըցաւ ,
 Ու վընաբեցինք մտամբ մեր տուգանք ,
 Թեւ մերք անել յանգի մեջ ինկանք ,
 Անտուտ մեր գըրչով Աստուածապարգէւ ,
 Զի պիտի մընանք մեր խոստման ներքեւ ,

Ու մերք դրժուարին ու մերք դիւրնցել
 Ճամբով մը պիտի ջանանք աւարտել :

Ասանայի Հայ ժողովուրդն անգին
 Որ մեր Արմատու մե՛ծ Դպրեվանքին
 Բեղուն հունձներէն հաղեց անհամար ,
 Իրեն հոգեւոր պիտոյին համար ,
 Մուշեղ վարդապետն հասակաւ պարթեւ
 Որ ոչ այնքան լուրջ է ոչ ալ թեթեւ ,
 Որոշեւ է տալ տարեկան անոր
 Հարիւր յիսուն հաւ ոսկի նորանոր ,
 Որպէս զի չ'ուտէ միայն արգանակ
 Եւ ծախսեր ընէ ճո՛խ , մեծախնակ :

Մայր վարժարանիսանունք որ , անձայն
 Սուրբ Հաղորդութեան , ո՛հ , արժանացան ,
 Եւ իրենց սիրուն մեղքերն առանձին ,
 Զորեքաբքի օր կանա՛ւիս , քաւեցին ,
 Հանդիմով մը մեծ պատմեն իրենց հօր ,
 Թէ Հաղորդութիւն իրենց առած օր
 Մեր Ս. Պատրիարք Հայրն իրենց զըւա
 Խրատներ շինիչ , յուզիչ , հոգեգրաւ
 Որպէս զի ըլլան , այր պարկեշտասուն
 Եւ պանծան ի մե՛ջ հրեշտակաց դասուն :

Մինչ մեր վարչական ժողովներն համակ ,
 Թողլով պահ մ'ամբողջ գիր եւ կամ նամակ ,
 Իրենց խոնջացեալ մըսքին ի յագուրդ ,
 Կ'ընէին շաքարու Զանգի արձակուրդ ,
 Եւ ժողովականք ալ մեր պերճաւոր
 Հանգիստ կ'ընէին լու՛ռ եւ անտուկ ,
 Յանձնաժողովոյ Նըպասից անդամք
 — Որոնց կ'արժէ որ գովեսներ կարգամք —
 Զուգելով երբե՛ք ունենալ հանգիստ ,
 Շաքարու մեջ նորէն փութացին ի նիստ ,
 Եւ օրակարգի խնդրոց անդադար
 Լուծումներ տրին ուղիղ եւ արդար :

Տօլապ-Տերէի դպրոցն որ ունի ,
 Այսօր մի լրբուած վիճակ , ծերունի ,
 Եւ անճեւեներէն տեղացող վերջին
 Հասած է կարծես իր հուսկ հառաչին
 Ս. Պատրիարք Հօր հրամանաւ պիտի
 Նորոգուի ու կեանք առնէ ծաղկաւի :

«ՀԱՆՐԱԳԻՏԱԿ»-ի ԹԵՐԹՈՂԸ 12

Հեղինակ՝ ԼՈՒԻ ՊՈՒՍԸՆԱՌ

Թարգմանեց՝ Յ. ՏԵՐ-ՅԱԿՈԲՅԱՆ

10,000 ՏԱՐԻ

ՍԱՌՆԱԿՈՅՏԻ ՄԸ ՄԷՁ

Մ. Սէնթէզ չարունակելով իր հարցումները ըսաւ :

— Երբ այսպէս, ուղած ատեննիդ մէկ տեղէ մը ուրիշ տեղ կը փոխադրուիք, ըսել է որ չափ քիչ ատենուան կեանք մը կուսնանաք : Հապա ի՞նչպէս ժամանակ կուսնանաք ձեր զաւակները կրթելու :

Մերունի Եւրոպացին չըջապատողները ժպիտ մը արձակեցին այս հարցման վրայ, որ անտարակոյս անսպասելի և եղական էր : Մեծ-ծերունի-պարոնը այս ուրախ արտայայտութենէն ետք յարեց :

— Ի բոլոր սրտէ կը խնդաք, առանց սակայն փոքր վիշտ մը պատճառել ուղեկու ձեզի : Բայց, Նախածին, չէինք կրնար ենթադրել որ աշխարհի մէջ մարդ մը պիտի գտնուի հաւտացող թէ մենք Ուղեղայիններս, մեր ձեռքովը կը մեծցնենք մեր զաւակները : Մի՛ զարմանաք : Բացատրեմ : Մեր զաւակները ընդհանուր կերպով կը մեծցուին Մաս-Չիններու կիներէն, որոնք կուտան պէտք եղած անունդը և անհրաժեշտ խնամքները մինչև որ մեր պղտիկները սկսին առաջին բառերը թօթօլել, անդրանիկ քայլերը առնել գետնին վրայ իբր պարզ Մաս-Չիններ և իրենց ծնողներուն պէս օգին մէջ բարձրանալու նախափորձերը կատարեն :

— Եւ յետո՞յ . . .

— Յետոյ մասնաւոր չէնք երու մէջ կը կրթուին երբ պատանի են, կիներու հսկողութեան և պատասխանատուութեան տակ, և այրերու՝ երբ աւելի մեծնան :

— Այս վերջին դաստիարակները Մաս-Չիններ չեն նշնպէս չէ՞ Մեծ-ծերունի-պարոն :

— Ոչ, Ուղեղայիններ են :

— Դուք կըսէիք թէ դասակարգի բաժանում չկայ ձեր մէջ, ամենքնուդ համար կամքը օրէնքն է՝ ձեր կեանքին : Ի՞նչպէս

կըլլայ սակայն այդ երբ մանկավարժական ծառայական և նստուկ վիճակը Ուղեղայիններ կը կատարեն :

— Մեր օրէնքը կը հրամայէ որ ամէն քաղաքացի իր կարգին, որոշ շրջանի մը մէջ ձրիաբար աշխատի մանկութեան դաստիարակութեան : Գալով « ծառայական » բառին, պէտք չէ այդ բացատրութիւնը գործածել, ամենէն ազնիւ, կիրթ և վսեմ գործի մը համար . . . : Ոչ մէկը կը խուսափի այս գործէն և մենք հաւասար ենք ամենքնիս պարտականութեան առջև :

— Անկեղծօրէն կը հիանամ Մեծ-ծերունի-պարոն : Շատ կը փափաքիմ ներկայ ըլլալ ձեր տղոց մէկ դասախօսութեան . . .

— Հիմա եթէ կը փափաքիք արագացընենք մեր ընթացքը այնպէս որ վայրկենաբար կտրենք միջոցը և քաղաք մտնենք :

— Հարցում մըն ալ կաղաչեմ : Երբ այսպէս, լոյսի չափ արագ կը կտրէք կ'անցնիք օգին մէջէն, արդեօք ճամբորդներուն միջև ընդհարում չի՞ պատահիր : Այս բանէն ահա կը դողամ :

— Ատանկ լան բնաւ չպատահիր : Երբ օգին մէջ երկու մարմիններ նոյն գծին վրայ գտնուին, մարմինները չըջանակող ջրղային մթնոլորդները իրար կը վանեն և մարդիկ առանց իրար դպչելու կանցնին :

Մ. Սէնթէզ կարգ մը նոր դիտողութիւններու համար դեռ բերանը պիտի բանար, բայց ժամանակ չունեցաւ : Այս վայրկեանին օղային ճամբորդը զգաց որ թեթեւ մը կը ճնշուի մարմինը և տեսակ մը ասղնտումի կ'ենթարկուի : Բայց ասիկայ հազիւ փայլակի մը չափ տեսց : Յետոյ լսեց Մեծ-ծերունի-պարոնին քաղձը ձայնը որ կըսէր,

— Հասանք :

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Օդային խումբը գետին իջաւ կարեւոր քաղաքի մը մէջ տեղը : գեղեցիկ ծառերով զարդարուած և հոյակապ յիշատակարաններով չըջանակուած ընդարձակ հրապարակի մը վրայ :

Մ. Սէնթեզ փափաք յայտնած ըլլալով քանի մը քայլ առնել հրապարակին վրայ, ընկերները համաձայնեցան այս խիստ բնական քահանայքին, քանի որ այդ փափաքը յայտնողը մարդ մըն էր որուն բոլոր կաղմաւորութիւնը դարերով ճնշուած մնացած էր : Տաժանելի դանդաղութեամբ քալելով հանդերձ, քանի որ իր վարժութիւնը կորսնցուցած էր, Մ. Սէնթեզ ապշանքով կը խորհրդածէր այն փոփոխութեան վրայ զոր աշխարհս կրեր էր, անձանթ վայրեր՝ հուշակուած, կեղծոն երկիրներ եղած էին և իր ժամանակի մարդոց վայրերն ալ անյայտ : Դեղին և սև ցեղերը խառնուելով ծայրայեղօրէն քաղաքակիրթ ցեղ մը արտադրած էին, մինչ իր սերունդը, ճերմակները, կոշտացած, աստիճանաւորկ, գերի և անիծեալներ եղած էին :

Մեծ-ծերունի-պարոնին քաղձը ձայնը խզեց անոր մտախոհութիւնը :

— Ծերուկս, փափաքեցար որ դասախօսութեան մը ներկայ գտնուիս : Ահաւասիկ մեր վարժարաններէն մէկը. հիմա բազմաթիւ աշակերտներ կան ի՞նչ, եկուր տեսնել թէ ի՞նչ կը սորվեցնէ ընտանիքի տէր հայր մը ապագայ սերունդին ներկայայուցիչներուն :

Մ. Սէնթեզ գլխով հաւանութեան շարժում մը ըրաւ և իր ընկերակիցներուն հետ ուղղուեցաւ դէպի մեծ շէնք մը որ գերեզմանի մը պէս լուռ էր : Շիտակ մտան անծայր սրահի մը մէջ, որ ամփիթատրոնի պէս սանդղաձև շինուած էր, և որուն նստարաններուն վրայ հարիւրաւոր տղաք անշարժ կեցած էին, արձաններ կարծուելու աստիճան :

Մ. Սէնթեզ չկրնալով ինքզինքը զսպել ըսաւ .

— Տարօրինակ է իրաւ որ թէ ի՞նչպէս այս փոքր Ուղեղայինները այսչափ խելօք են :

Անոնք ոչ մէկ շարժում, ոչ մէկ մրմուջ ունին : Ի՞նչ երկաթեայ կարգապահութեան կ'ենթարկեն ընտանիքի այս հայրերը իրենց սերունդը :

— Վստահ եղի՞ք Նախածին որ, պատասխանեց Մեծ-ծերունի-պարոնը իր նոր բարեկամին ականջն ի վար, մեր զաւակները ճնշում չեն ճանչնար և չեն գիտեր ինչ որ դուք կարգապահութիւն կը կոչէք :

— Բայց այս անշարժութիւնը, այս տաժանագին լուսթիւնը, այս թմրութիւնը...

— Նախածին, գիտցէ՞ք որ մեր տղաքը ամենքն ալ քնացած են . . . :

— Քնացած . . . Դպրոցին մէջ, քնանալ երբ ուսուցիչը կը խօսի . . .

— Անտարակոյս : Տղաքը կրթել իրենց բունին ատեն, մեր միակ դրութիւնն է, անջնջելի կերպով և առանց փոքր յոգնութեան անոնց ուղեղին մէջ հաստատելու համար ամենէն դժուարին գիտութիւնները : Բայց հաճեցէ՞ք մտիկ ընել ուսուցիչին խօսքերը . . .

Վարժապետը, ինչպէս իր բոլոր ցեղակիցները կը խօսէր խիստ մեղմ, բայց արտակարգ դիւրադարձութեամբ, կարծես թէ կարճ ժամանակի մէջ կարելի եղածին չափ շատ բան ըսելու համար : Վարժապետը մտտերմական նշան մը ըրաւ Մեծ-ծերունի-պարոնին, և իր ընկերներուն, զարմանալար ակնարկ մը նետեց Մ. Սէնթեզի վրայ, կարծես ըսել ուզելով թէ այս երկարամօրուս, դողդոջ հասակով, արտակարգ հագուստներով Մաօ-Չինը ի՞նչ գործ ունէր այս Ուղեղայիններուն հետ : Ասիկա բռնաբարում մը չէ՞ր դարաւոր արգելքին, քանի որ Մաօ-Չիններուն արտօնութիւն չկար կրթարանները մտնելու : Վարանման վայրկեանէ մը ետք, ուսուցիչը շարունակեց իր դասը Մեծ-ծերունի-պարոնին մէկ շարժումին վրայ, խօսքը ուղղելով իր դեռատի ունկնդիրներուն, որոնց ոչ մէկը իր աչքը կը թարթէր :

(Շարունակելի)

Արտօնատէր ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

Տպագրութիւն ՃԻՀԱՆ ԳՐԱՏԱՆ

Պ.ուպ.Ալի ԵԱՏԵՍԻ Թ. 38

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԼԱՆՊԵՐԱԵՆԱԳ

Արանց, Կանանց եւ Տղայոց

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ

Կ. Պոլիս, Սուրբան Հարմար, Թօփալեան խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց առկունութեամբ և գիներու անմրցելի աժանութեամբը չահած է բոլոր իրեն գիմող յաճախորդաց վստահութիւնը, այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր հագուստներու, կանանց թելադրիներու և տղայոց չիք և գիմացկուն ֆուքիսներու ճոխ մթերք մը պատրաստ ունի, որ ջերմապէս կը յանձնարարուի ամէն աւունց, որոնք պէտք ունին ներկայ եղանակին հագուստի և ուրիշ նմանօրինակ պիտոյից.

Սակարկութիւն չկայ, թիւը 2 շրշ է. Գաւառներէն յանձնարարութիւնք փութով կը կատարուին.


31—50

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԹԷՅԻ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐ

ՄԻՇՏ ԱԺԱՆ ՈՒ ԹԱՐՄ ԵՆ



ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ԸՆՏԻՐ, ԱԺԱՆ

ԵՒ

ՀՈՏԱՒԷՏ ԹԵՅԵՐ

Կ. Պոլիս, Պահակ-Գափու, Ճեյա-Պեյ խան, քի. 10

ԱՆՏԵԼԻՊ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ՆՈՒԱԳԱՐԱՆԱՅ ԵՒ ՊԻՏՈՅԻՑ

ՄԱՍՆԱԴՈՐԱԲԱՐ



Ֆոֆոկրաֆի եւ Գրաններու Կրամֆոնի
եւ Երկկողմ Բլագներու, Կեղրոնա-
տեղի Պահակ Գափու, Հաճի Պեքի-
Էֆենտի կից, Եալազգ խան տակ
քի. 2 : Մասնաճիւղ Պահակ Գափու
քի. 52 :

Վաճառատանս
30 տարիներէ
ի վեր ծախած
ապրանաց տո-
կունութեան և
թէ նորոգու-
թեան մասին
չահած համա-
ւը բազմաթիւ

յաճախորդներուն ծանօթ ըլլալով, կը փութանք յայտարարել թէ՛ այս անգամ նոր
դրութեամբ և կատարելագործեալ լաւ տեսակ Կրամֆոններ և երկու կողմն ալ զատ
զատ եղանակներով Բլագներ բերել տուած ենք, և կրնանք մրցիլ հրապարակի վրայ
գտնուած բոլոր նմանօրինակ ապրանաց հետ, թէ՛ տոկունութեամբ, ճայնի առաւելու-
թեամբ և թէ՛ աժանութեամբ : Գաւառներէն եղած յանձնարարութիւնք կը կա-
տարուին ամենայն ուշադրութեամբ և հոգածութեամբ :

Անգամ մը փորձելը բաւական է հաստատելու համար մեր ըսածները Դիմել
կեդրոնատեղին :